

Դի'ր զիս անոր տակ. ու զթերթեր կոկոնին
Սըփռէ վերայս, ծածկեն զեփռին զիս ի ծուփ:

Մ Ա Ն Կ Ի Կ

Իսկ ի՞նչ ասեմ՝ քղքեզ ծընող՝ անուցող մօր,
Նորափետուր եղբարցդ՝ դոյն հետ լոյս տեսար,
Ուր թեւ ի թեւ կը վազվազեն աստանօր,
Բընկան ներս՝ գուրս քեզ փընդուելով վըշտահար:

Ձ Ա Գ


Աստ. մեռաւ ձեր հէգ փղբրիկ մահադող,
Մոռացութեան վիհն էջ անլոյս և անլոյս.
Մանկըկիդ տաք մարգարտաց հետ խառնեն թող
Ջրենց արտասուքն ու զերգ մահուան խըղճալոյս:

Մ Ա Ն Կ Ի Կ

Ես այլ քեզ հետ կու գամ, անմեղ փղբրիկդ իմ,
Հոն ուր հանգչիք թըռչնիկդ ու վարդն անյարիր.
Եւ օր մ'այլ զիմ խոր քուն թօթփած՝ վեր թըռչիմ,
Առած թեւերդ, երգդ ու զվարդին գոյն կարմիր:

Հացոսնի

ԹԱՆՈՒՅ Ի 16 յունիսի 1895



ԾԱՂԿՈՒՆՔ

Սիրուն մանուկ, սիրէ՛ զծաղիկ,
Քուկին չըքնաղ պատկերն է այն.
Երկիր պըճնի նորա գունով գեղեցիկ,
Եւ քու հասակ շնորհօք միայն.
Նորա փափկիկ հոտն՝ որոյ քաղցր շողին
Կը պըտառի ափանց վերայ,
Է նըշանակ, է և վըկայ
Անմեղութեան քու սուրբ սրբոխն:
Կը խոստանայ նա քիզ անուշ
Պըտուղ բերել, և յոյս կու տայ.
Իսկ քու սիրուն հասակ քընքուշ
Դեռ աւելին կը խոստանայ.
Աղուօր ծաղիկդ վերայ հըսկէ,

Հըսկէ անդուլ և անդադար,
Նորա գողտրիկ ցօղունըն ջրէ,
Անոր սիրով հօգ և խնամ տար
Յուրա հովերէն ըզնա պահէ:
Բայց զայն այսպէս մըշակելով սիրախնամ,
Մտածէ որդեակ իմ սիրական
Թէ քեզ այլ պէտք կայ յարածամ
Որ մէկն. հըսկէ քոյդ մանկութեան:

Վ Ա Ր Գ

Քաղցրիկ դաքնան սիրուն ծաղիկ,
Որչափ քոս տեսքդ հաճոյ է ինձ:

Բայց վայ հազիւ թէ կը ծաղկիս
Կը նետես քու փայլուն գունիկ :
Մական երբոր բախտ անհամբոյր
Վըճուեց քուկին տըխուր վախճան ,
Ատուածային գեղոյդ փութան
Մեզ կը մընայ դեռ քու սուրբ բոյր :
Այսպէս երբոր հանճար մի մեծ
Յանկարծ փակէ իրեն աչեր ,
Ետ իւր մահուն կը մընայ մեզ
Իւր համբաւին անուշ հոտեր :

ԱՌ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Նըկատէ զայս մարգագետին
Ձոր կը պըճնեն քընքուշ ծաղկունք .
Ո՛հ , ի՞նչ քաղցր է , զմայլի հոգին ,
Բայց ծաղկանց տակ օձ կայ թաքուն :
Նըման ասոր է այն նըկար
Ձոր կը ցուցնէ ստախօս աշխարհ ,
Կը գերէ զմեզ իւր սուտ փայլով ,
Մեզմէ վըտանգը ծածկելով :
Ըզգուշացիր , մանուկ հոտակ ,
Մի՛ հետևիր իւր չար շաղագաց .
Իւր հեշտանօքն այն անուշակ
Կը վընասէ նա քու կենաց :

Ծ Ա Ղ Ի Կ

Շաղիկ տըժգոյն և միայնակ ,
Դու որ հովտին պատիւ եղար ,

Քու մընացորդդդ դիր և տար
Յըրուեց քամին խիտ դըժընդակ ,
Նոյն մանգաղն է որ զմեզ հընձէ ,
Կը խոնարհինք նոյն Ատուծոյն .
Տերև մի զքեզ կը լըքանէ ,
Հանդը մի մեզ տայ հուսկ ողջոյն :
Մարդ ի ցնորից ըսթափելով ,
Կը հարցընէ իրեն ցաւով ,
Ո՞րն աւելի է վաղանցիկ
Կենաց օրերն եթէ ծաղիկ :

Տ Ե Ր Ե Ի

Յօղունդ բաժնուած ,
Խեղճ տերև չորացած ,
Ու՛ր կ'երթաս . — Ձեմ՝ գիտեր .
Իմ ապաւէն նեցուկ կաղնին
Կոտորեց մի հով մըրըրկաբեր :
Մեղմիկ գեփիւղն կամ հիւստին
Թեթիւ շընչով իւր յեղափոխ՝
Տանի բերէ զիս փոխ առ փոխ
Անտառակէն շիտակ ի գաշտ ,
Եւ լեռներէն ի մէջ հովտաց .
Կ'երթամ ուր զիս հովըն տանի ,
Առանց սոսկման և տըրտընման .
Կ'երթամ ուր որ գնայ ամենայն ,
Ուր որ կ'երթայ տերև վարդի ,
Ուր սարդենուոյն տերև թափի :

ՕՐՈՒԱՆ ՋՈՐՍ ՄԱՍՈՒՆԸԸ

Իւր տէրութիւնն յանձնեց արփույն արշալոյս ,
Ջարթնու ժըպտի բնութիւն՝ նորա թարմ լուսոյն .
Երբ հետ լուսոյն կը սըփռէ իւր գեղ սիրուն ,
Կարծեմ տեսնել ժպիտ Ատուծոյ
Իւր բարութեամբ , շնորհօք գեղուն ,
Կէսօրն ըզնա հանէ ի գահ բոցեղէն .
Պայծառութեանն ա՛յլ ևս աչք չի գիմանար ,
Եւ ես կ'ըսեմ , ընկճեալ յիւր բոցն հըրավառ
Ատուած է որ երկընքէն
Ձիւ իւր փառք լնու անճառ ,
Իրիկուն՝ դէպ հորիզոն՝ իւր կառքն իջած
Կարծես յենուկ կ'ուզէ հեռու ծայրերուն .
Իւր անպըստակ ճակատ վառի վարդագոյն .
Աւացը թոյլ տուողն է Ատուած
Առ ինք սլանալ Տէր գերագոյն :

Քիշեր սևուկ շղարշով զերկիր կը ծածկէ .
Կը մարէ շունչն իւր արևին ջահ փայլուն .
Երբ համր աշխարհ թրւի դամբան մի անհուն ,
 Յայնժամ խառնէ Ստոտած ինքն է ,
 Խոստանայ օր զեղեցիկագոյն :

ՀԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ

Աշխատութեան մասն հանեցէք , որդեակք անուշ ,
 Մէջ օրերուն ձեր մանկութեան :
Հաճոյից տալ բոլորն չէ իմաստութեան :
Ո՛վ որ այլազգ խորհի , նախ քան ծերութեան ժամ
 Պիտի զրոյնայ , բայց շատ շատ աշ :

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ

Ջանմեղութիւն տարէք յեզերս զառիւլայրին ,
Խիստ պատիժներ զըրէք առջև իրեն աչքին .
 Է ի խայթից իւր սիրտն ազատ ,
 Չունի կընճիւն իւր ջինջ ճակատ .
 Իշխանութիւնն մեռելոց
 Սարափ կ'ազդէ միայն պղծոց :

ՆԿԱՐԱԳԻՐ ԻՄԱՍՏՈՅ

Իմաստունն ամէն բան լըսելէն վերջ խօսի համառօտ .
 Կը հարցնէ և տայ յարմար պատասխան .
 Քան զինքն առաւել իմաստնոյ մը մօտ
 Հազիւ թէ երբէք կը բանայ բերան .
Նա բընաւ երբէք այլոց գործերուն չէ հետաքրքիր ,
 Ինչ որ պէտք է նա գիտնայ միայն այն է ցանկալի իր :

Թարգմ. Ի գաղղ .

